

Արձանագրություն հ. 7

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
07.12.17 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 27-ը:

Նիստին ներկա էր ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյանը:

Նիստը նախագահում էր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ղարիբյանը:

Օրակարգում՝

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (զեկուցող՝ դեկան Հ.Սարգսյան):

Բացելով նիստը նախագահողը ձայնը տվեց ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Սարգսյանին, որը ներկայացրեց մեկ տարում ֆակուլտետի գործունեության արդյունքները (զեկուցումը կցվում է):

Նա անդրադարձ կատարեց ամբիոնների գործունեությանը և խոսեց ֆակուլտետի ձեռքբերումների մասին, որոնցից ամենանշանակալիցը ֆակուլտետում Սահմանադրական տնտեսագիտության գիտա- վերլուծական կենտրոնի ստեղծումն էր, որին իր անձնական աջակցությունն է ունեցել ԵՊՀ ռեկտոր Ա.Սիմոնյանը: Նա ասաց նաև, որ կենտրոնի ներկայացուցիչները՝ Հ.Սարգսյանը և Ռ.Գևորգյանը ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ.Հարությունյանի հետ միասին նույնպես ամսին մասնակցել են Հոռոմում տեղի ունեցած միջազգային գիտաժողովին, որտեղ ներկայացրել են սահմանադրականության վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումները:

Արտահայտվեցին.

Վ. Բոստանջյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Շատ բարձր գնահատելով դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքը, ասաց, որ ֆակուլտետում տիրում է բարի դրացիական, փոխադարձ հարգանքի և ջերմ մթնոլորտ, որը Հ.Սարգսյանի կառավարման շատ նուրբ մեթոդների կիրառման արդյունքն է: Ֆակուլտետի բոլոր դասախոսները շատ զոհ են այդպիսի միջավայրում աշխատել:

Անչափ բարդ է 2000 թվաքանակով ֆակուլտետը կառավարել և հաջողություններ գրանցել, սակայն դա մեր դեկանին հաջողվել է:

Մենք գիտենք, թե ներկայումս ինչքան դժվար է դրամաշնորհների ձեռք բերումը, բայց մեր ֆակուլտետը 3 դրամաշնորհային թեմաներ է կատարում:

Սահմանադրական տնտեսագիտության կենտրոնի մասին բարձրաձայնում են հանրապետության տարբեր կառույցներում:

Ներկայումս ես ԱԾ պատգամավոր եմ, սակայն այս ֆակուլտետում ինձ զգում եմ իմ տիրույթում, որը պայմանավորված է մեր դեկանի անձնական որակներով, ով

կարողանում է կառավարման համապատասխան մակարդակ ապահովել, որը ես համարում եմ բարձր:

Ա.Մարկոսյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, նույնպես բարձր գնահատելով դեկանի աշխատանքը, անդրադարձավ կրթության մասին օրենքի նախագծին, արատավոր պրակտիկա համարելով այն, որ օրենքները գրվում են նախարարություններում, անտեսելով գիտական կառույցների ներուժը:

Կ.Խաչատրյան, Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Դեկանի զեկուցումից պարզ դարձավ, որ ֆակուլտետի ձեռքբերումները շատ են: Մեր ամբիոնը նույնպես նորություններ ունեցավ, հաստատվեց նոր մագիստրոսական ծրագիր, որի համալրումը նույնպես կայացավ: Ծրագրի իրականացմանը մեծ չափով նպաստել է ԵՊՀ ռեկտորը և ես շնորհակալություն եմ հայտնում պ-ն Սիմոնյանին աջակցության համար: Ամբիոնը որդեգրել է կրթության և պրակտիկայի միջև կապի սերտացման գործընթաց: Սակայն ամբիոնի ներուժը լրիվ չի օգտագործվում, ես հորդորում եմ իմ գործընկերներին ավելի ակտիվ մասնակցելու գրանտային հայտերին: Նախատեսում ենք ամբիոնային սեմինարներ անցկացնելու հնարավորությունը:

Կուզենայի որ լսարանները ապահովվեին պրոեկտորներով, որպեսզի հնարավոր լիներ կիրառելու դասավանդման ժամանակակից մեթոդներ:

Պարոն Սարգսյանի հաշվետվությունը գնահատում եմ դրական:

Հ.Մնացականյան, Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Երկու կարևոր դիտարկում ունեմ, առաջին՝ հավաքվել է մի կուլեկտիվ, որ փոխադարձ հարգանք են տաժում միմյանց, երկրորդ՝ մեր ուսանողությունը շատ լավն է, ունենալով դեկանի աջակցությունը նրանց կառույցները արդյունավետ են աշխատում:

Իսկ դեկանատը աշխատում է ժամացույցի ճշգրտությամբ:

Մեր ամբիոնի մասին կասեմ, որ 2 տարի է , որ հաշվապահական ծրագրերն իրականացվում են նորագույն մեթոդներով:

Միանում եմ իմ գործընկերներին և դեկանի աշխատանքը գնահատում եմ բավարար:

Ի.Վարդանյան, ֆակուլտետի ուս.խորհրդի նախագահ, մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի:

Նրա կարծիքով ուսանողների ներկայության համար բալը պետք է փոխարինվի սեմինարներին ակտիվության համար բալով, մագիստրատուրայում նույնպես պետք է

պրակտիկա մտցվի և հնարավորինս պետք է դասավանդվեն ծրագրավորման նորագույն փաթեթներ:

Գ. Ղարիբջան ,ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

Հայկ Լևոնիչը ավարտին հասցրեց ԵՊՀ-ում տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման հիմնական նպատակը: Վերանայվեցին ծրագրերը, գիտության զարգացման հարցերը նույնպես գտնվեցին նրա ուշադրության կենտրոնում: Մեծագույն ձեռքբերում է ֆակուլտետում գիտության նոր ուղղության զարգացումը, ի դեմս սահմանադրական տնտեսագիտության: Հաշվետու տարում դեկանը պարզևատրվել է հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆ.Նանսենի ոսկե մեդալով:

Համալսարանը գիտության կենտրոն է պետք է ավելի զարգացնել միջազգային կապերը:

Ցանկանանք, որ Հայկ Լևոնիչը երկար կառավարի: Նրա աշխատանքը ըստ ընդունված կարգի գնահատում եմ բավարար:

ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյան: Ես էլ այն կարծիքին եմ, որ ֆակուլտետում մեծ աշխատանք է տարվում և դա դեկանի նախաձեռնության և հաստատակամության շնորհիվ է, ինչպես նաև ամբիոնների վարիչների:

Անորոշության որոշակի պայմաններ են առկա գիտա-կրթական ոլորտում, որը բնորոշ է ամբողջ աշխարհին: Կա մի փաստ, որի մասին լավ գիտենք, մոտակա 10 տարիների ընթացքում անհետանալու են որոշ մասնագիտություններ, իրենց տեղը զիջելով նորերին: Երկրները դժվարանում են նոր մասնագիտությունների որոշման հարցում: Մենք նույնպես պետք է այդ ուղղությամբ աշխատենք և ունենանք մեր նիշան:

Հասարակության վերաբերմունքը կրթության նկատմամբ անհասկանալի է: ՀՀ-ում այսօր գործում են այնքան բուհեր, որքան Դանիայում և սկանդինավյան երկրներում միասին վերցրած: Պետք է հնարավորինս կրճատվի այդ թիվը:

Համալսարանը վճարովի ծառայություններ մատուցելու մեծ ներուժ ունի, սակայն մենք այն չենք օգտագործում, ասպարեզը զիջել ենք դիլետանտներին, զբաղվեք դրանով, որպեսզի նրանք շուկան չգրավեն:

Հունվարի մեկից հիմնովին զբաղվելու ենք ծրագրերի արդիականացման խնդիրներով: Համալսարանական աշխատանքի ապագան գերազանցության կենտրոնների ստեղծումն է:

Վերջին 10 տարում ԵՊՀ են ընդունվում դիմորդների 1/3-ը: Եկող տարի համարյա թե չենք ունենալու առաջին կուրս:

ԵՊՀ ֆինանսական վիճակի մասին պետք է ասել, որ բյուջեյի 1/10-ն ուղղված է սոցիալական ծրագրերին: Միջազգային նորմ կա, եթե բուհի բյուջեյի 64%-ը հատկացվում է աշխատավարձին, ապա այդ բուհը զարգացման հնարավորություն չի կարող ունենալ:

Դեկտեմբերին կստանաք 13-րդ աշխատավարձ, սկսվել են նաև ինտրանետի տվյալներով վճարումները: 2018 թվականին կաշխատենք հնարավորության սահմաններում բարձրացնել աշխատավարձը:

Մագիստրատուրայի պրակտիկաների վերաբերյալ հարցը խնդրահարույց է, ընկերությունները բացարձակ շահագրգռված չեն մեզ հետ աշխատել:

Նա անդրադարձավ նաև ԵՊՀ-ին և ֆակուլտետին առնչվող խնդիրների լուսաբանմանը: Նա խոստացավ ֆակուլտետին տրամադրել պրոեկտորներ:

Որոշեցին տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Լ.Սարգսյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել դրական:

նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ
Թղթակից սանդախտ

գլխավորելիքի բարտուղար,
տ. գ. թ., պրոֆեսոր



Գ. Ա. Նարիբեյան

Ա. Հ. Համբարձումյան